ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 13 » օգոստոս 2025թ. No 4949 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 22-Ի N 3121-Ա, 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-Ի 3891-Ա ՀՐԱՄԱՆՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության N 01/3541-25 առ 23.07.2025թ. գրությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. ՀՀ առողջապահության նախարարի 2025 թվականի մայիսի 22-ի «Հայաստանի Հանրապետությունում դեղերի պետական գրանցման մասին» N 3121-Ա հրամանի 4-րդ կետում ավելացնել «Սուպրաստին լուծույթ ներարկման N 19350 բառերը»,

2. ՀՀ առողջապահության նախարարի 2025 թվականի հունիսի 27-ի «Հայաստանի Հանրապետությունում դեղերի պետական գրանցման մասին» N 3891-Ա հրամանի 4-րդ կետի «Կարսիլ Ֆորտե դեղապատիճներ կոշտ 90մգ N 20644» բառերը փոխարինել «Կարսիլ Ֆորտե դեղապատիճներ կոշտ 90մգ N 20644/1/1» բառերով:

3. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝ սույն հրամանն ընդունվելու պահից տեղեկացնել ՀՀ ԱՆ «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը:

4. ՀՀ ԱՆ «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ա.Բաղրյանին՝

1) սույն հրամանը ստանալուց հետո ապահովել լրամշակման կատարումը գրանցամատյանում, ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաստատված կարգով, նշելով փոփոխության տիպը և ընդունման ամսաթիվը.

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ Ա. ՋՈՒՄԱՅԱՆ

Recoverable Signature

X

ԱՐՏԱԿ ՋՈՒՄԱՅԱՆ

Signed by: DZHUMAYAN ARTAK 2801841080